

Հայտարարություն

Հայտարարվում է մրցույթ՝ ՀՀ Սյունիքի մարզի «Կապանի N 6 հիմնական դպրոց» ՊՈԱԿ ի կենսաբանության (6 դասաժամ), ինֆորմատիկա(9 դասաժամ), ռուսաց լեզու (22 դասաժամ) ուսուցչի թափուր տեղի համար:

Մրցույթը անց է կացվում երկու փուլով՝ բանավոր և գրավոր:

Մրցույթին մասնակցելու համար պետք է ներկայացնել՝

- դիմում «Ձեռ1»,
- մեկ լուսանկար 3X4 չափի,
- բարձրագույն կրթությունը հավաստող փաստաթուղթ (դիպլոմ),
 - Անձը հաստատող փաստաթուղթ,
 - «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 26 հոդվածի 1-ին մասին համապատասխան՝ աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք աշխատավայրից եւ աշխատանքային գրքույքի պատճենը (առկայության դեպքում),
 - ինքնակենսագրություն (Ձեռ 5),
 - այլ պետությունների քաղաքացիները՝ ՀՀ-ում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ, - հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր (առկայության դեպքում),
- որակավորման տարակարգ ունենալու դեպքում՝ հավաստող փաստաթուղթ:
Տնօրենի կողմից նշանակված պատասխանատու անձը փաստաթղթերի բնօրինակները համեմատում է պատճենների հետ եւ բնօրինակները վերադարձնում:
Եթե ներկայացված փաստաթղթերի ցանկն ամբողջական չէ կամ առկա են թերություններ, մասնակիցը կարող է մինչեւ փաստաթղթերի ընդունման ժամկետի ավարտը վերացնել եւ համալրել դրանք:
Փաստաթղթերն ընդունվում են օգոստոսի 24-ից մինչև սեպտեմբերի 2-ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 10:00-ից 14:00-ը, բացի շաբաթ, կիրակի եւ այլ ոչ աշխատանքային օրերից:

Մրցույթը տեղի կունենա սեպտեմբերի 6 -ին՝ ժամը 14:00-ին, Կապանի N6 հիմնական դպրոցում. հասցեն՝ ք. Կապան Մ.Հարությունյան 5-Ա:

Տեղեկությունների համար զանգահարել՝ 077782955 կամ 028523783